

2395

23

✓

# Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

Ե Ի

## Հ Ա Շ Ի Ի

Բ Ա Գ ՈՒ Ա Յ Հ Ա Յ Ո Ց Կ ՈՒ Լ Տ ՈՒ Ր Ա Կ Ա Ն Մ Ի ՈՒ Թ Ե Ա Ն

1915 և 1916 թ.

№ 9—10

47219

Իրրոնաշար սար. Ս. Թ. Շահբաղիանի  
Բ. Վ. Գ. Ի. Ի.

Լեկտրոլենտնա Ս. Գ. Շահբաղիան, Բաքու. Թեղ. 19-85.


1917

13822

~~13822~~

13822

**Վ Ե Ր Ա Ս Տ Ո Ւ Գ Ո Ղ Յ Ա Ն Ձ Ն Ա Ժ Ո Ղ Ո Վ Ի  
Ջ Ե Կ Ո Ւ Ց Ո Ւ Մ Ը**




1915 թ. յունիսի 3-ին կայացած Միութեան ընդհանուր ժողովում ընտրուած վերաստուգող յանձնաժողովի անդամներս, համաձայն նոյն այդ ժողովի որոշման, մի շարք նիստերում վերաստուգելով 1914, 1915 և 1916 թ. Միութեան Գլխաւոր Խորհրդի, Սեկցիաների և Կոմիտէների հաշիւներն ու հաշուեկշիռները, համեմատելով հաշուապահական մատեանները և վաւերաթղթերի հետ, գտանք միանգամայն ճիշտ և ուղիղ:

Վերաստուգող յանձնաժողի անդամներ՝

- Յ. Խիզանեան
- Ա. Աղամալեան
- Խ. Մելիք-Աղամիբեան
- Լ. Աղախանեան



# ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱԳԻՐ ԲԱԳՈՒԱՅ 3. ԿՈՒՆՏՈՒՐԱԿԱՄՆ ԻՈՒԹԵԱՆ 1908—1916 Թ.



Միութեան բոլոր գործերի ղեկավարն ու կարգադրիչը Գլխաւոր Խորհուրդն է, այսպէս է ընդգծել Միութեան կանոնադրութիւնը: Գլխաւոր Խորհուրդը ի մի է հաւաքում բոլոր սեկցիաների նախագահներին, որոնք Խորհրդի նիստերին ղեկուցում են իրենց բիւրօների անցուղարձը, որովհետեւ Խորհուրդն է, որ կոչուած է օգնութեան գալու սեկցիաներին: Այդ սկզբունքը մշտապէս ղեկավար է հանդիսացել Գլխաւոր Խորհրդին, որը առանց մտազայտ անգամ խախտելու բիւրօների ինքնուրոյն գործունէութիւնը, ըստ չափու կարողութեան նիւթական ու բարոյական աջակցութիւն է ցոյց տուել գլխաւորապէս այն սեկցիաներին, որոնց միջոցները աւելի սուղ են եղել: Այդպիսով Խորհուրդը մի կողմից նպաստել է սեկցիաներին նիւթական միջոցներով, միւս կողմից խթան է հանդիսացել աւելի բեղմնաւոր և արգասաւոր գործունէութեան: Այդ կողմից անգնահատելի ծառայութիւն է մատուցել թէ ընդհանրապէս Միութեան և թէ մասնաւորապէս սեկցիաների բարգաւաճման Միութեան հիմնադիր և Խորհրդի հանգուցեալ նախագահ Կոնստանդին Խատիսեանը, որը մինչև իւր մահուան օրը (1913 թ. Հոկտ. 23-ը) Կուլտուրական Միութեան նկատմամբ մի նպատակ է ունեցել—որքան կարելի է աւելի բարգաւաճ գրութեան հասցնել Միութիւնը, որքան հնարաւոր է աւելացնել Միութեան մշտական եկամուտները, աւելի կայուն ու հաստատուն հիմքերի վրայ դնել Միութեան գոյութիւնը: Եւ նա իւր այդ նպատակներն իրագործելու համար ոչ մի արգելքի առաջ կանգ չի առել, նա անյողողող ոչ միայն ինքն է առաջ դնացել, այլ և իւր այդ ինքնօրինակ հմայքով ու ուղեւորութեամբ շատ շատերին է գրաւել դէպի Միութիւնը: Ապագային թողնելով հանգուցեալ Կ. Խատիսեանի հասարակական գործունէութեան լրիւ տեղեկագիր տալը, Կուլտուրական Միութեան գործունէութեան սոյն համառոտ ակնարկում անկարելի է չը յիշատակել այն մեծ ծառայութիւնը, որպիսին նա մատուցել է Միութեան համար սեպհական տան կառուցանելու գործում: 1911 թ. Կ. Խատիսեանի առաջարկութեամբ Գլխաւոր Խորհուրդը ինդերամատոյց է լինում Բագուի Քաղաքային Վարչութեան ձրիապէս Միութեան տրամադրութեան տակ դնել Տեխնիքական ընկ. շինութեան դիմաց, Միլիոննայիա և Տորգովայիա փողոցների անկիւնում ազատ հողաբաժինը—սեպհական տուն կառուցանելու, որտեղ պիտի տեղաւորուէին Միութեան գրասենեակը, Կանանց արհեստագիտական դպրոցը, շուհականոցը, գրքերի պահեստը, բժշկական սեկցիայի ապագայ երթևեկ բուժարանը, Մեկրորտիւ սեկցիայի ապագայ գիւղատնտեսական կամ այլ արհեստագիտական վարժարանը, միջակ մեծութեամբ դահլիճ—ժողովրդական թատրոնի ու դասախօսութիւնների համար, Միութեան սեպհական տպարանը և այլն: Կ. Խատիսեանի բաղձանքն էր այս

ամենը ունենալ ի մի ժողովուած մի յարկի տակ—Կուլտուրական Միութեան շինութեան մէջ: Եւ մինչ Քաղաքային Դուման և ձայնաւորները, յարգելով հանդերձ Կ. Մ. խնդիրքը, յիշեալ հողաբաժինը (400 քառ. սաժ.) ձրիաբար Միութեան տրամադրութեան տակ դնելով, անիրագործելի ցնորք էին համարում առանց որեէ մի գումար ունենալու այդպիսի տուն կառուցելը, հանգուցեալը 1912 թ. սկզբից մի առանձին թափով այդ նպատակին նուիրուցեց: Նոյն այդ նպատակով Խորհուրդը ընտրեց մի մշտական Շինարարական յանձնաժողով Գ. Պ. Լազարեանի նախագահութեամբ, որին և լիազօրութիւն տուց միջոցներ հայթհայթել Միութեան սեպհական շինութիւնը կառուցանելու համար: Շինարարական յանձնաժողովը անմիջապէս գործի ձեռնարկեց. մայիս ամսին արդէն պատրաստ էր ապագայ տան յատակագիծը, որը կազմել էր Կ. Խատիսեանի ցուցմունքներով ճարտարապետ Վ. Ս. Սարգսեանը: Նոյն թուի յունիսի 3-ին կատարուեց ապագայ շինութեան հիմնարկէքի օրհնութիւնը: Օգտուելով յարմար առիթից, հէնց նոյն այդ օրը Միութեան նախագահ Կ. Խատիսեանը 20,000-աչափ մի գումար հանգանակեց յօգուտ շինութեան, որով և անմիջապէս ձեռնարկուեց կառուցման գործին: Այսպիսով ահա հաստատուն հիմքերի վրայ դրեց հանգուցեալը Միութեան սեպհական տան կառուցման գործը, որը նոյն թափով էլ առաջ տարաւ մինչև իւր մահուան օրը—1913 թ. հոկտեմբեր 23-ը—քառայարկ հսկայական շէնքի վրայի գործը մինչև տանիքը մեծաւ մասամբ վերջացնելով: Չը պէտք է ուրանալ, որ Բագուի հայ հասարակութիւնը Կ. Խատիսեանի մահուանից յետոյ ևս անտարբեր չը մնաց դէպի այդ շինութիւնը: Միութեան ղեկավարները, աջակից ունենալով հանգուցեալի մտերիմ ընկերներին, շարունակեցին նոր նուիրատուութիւններ գանձել յօգուտ այդ նպատակի և մինչև 1914 թ. յուլիս ամիսը շինութեան տանիքը ծածկեցին ու ձեռնարկեցին վայտի մասերին: Այդ ամսի 19-ին էր, որ բռնկուեց համաեւրոպական պատերազմը: Հայրենիքի պաշտպան վիրաւոր զինուորներին բժշկական օգնութիւն հասցնել էր պէտք. ահա այդ պարագայում էր, որ Միութիւնը նորից դիմեց հայկական Ֆիրմաներին և ունեւոր դասին, հանգանակեց որոշ գումար, այդ գումարով 1—2 ամսուայ ընթացքում ըստ ամենայնի աւարտելով շինութեան առաջին երեք յարկերի կառուցումը, այդ երեք յարկերը միանգամայն ձրիաբար Կարմիր Խաչի տրամադրութեան տակ դրեց որպէս հիւանդանոցի համար յարմարեցրուած շինութիւն: Շինութեան այդ մասերում է տեղաւորուած Կարմիր Խաչի հիւանդանոցը, ուր խնամուած են մօտաւորապէս 200 հիւանդ սպաներ ու զինուորներ: Ինչ վերաբերուած է շինութեան չորրորդ յարկին, այդ ևս արդէն վերջացած է, այդտեղ է տեղաւորուած Միութեան գիւանատունը, խորհրդարանը, կանանց Կոմիտէի դահլիճը, մէկ մասն էլ վարձով տրուած է Կавказск. окр. Страхов. Т-во ընկերութեան: Շինութիւնը դեռ բոլորովին չէ վերջացած, Խորհուրդը հաւատացած է, որ մօտ ապագայում կը վերջանայ կառուցման գործը և այնուհետև 1—2 տարուայ ընթացքում հնարաւոր կը լինի շինութիւնից մնացած պարտքերը հատուցանել:

Այժմ մի համառօտ ակնարկ սեկցիաների և Միութեան ժամանակաւոր Կոմիտէներէի գործունէութեան մասին:

Երբ պայթից այս մեծ համաշխարհային պատերազմը, Գլխաւոր Խորհուրդը Միութեան կից հիմնեց Գլխաւոր Նպաստամատոյց և Կանանց Կոմիտէներ, որոնցից առաջինը զբաղուեալ է պահեստիներէ չքաւոր ընտանիքներին գիւղերում սերմացու մատակարարելու գործով: 1914—1915 թ. յատուկ լիազօրներ ձեռքով կազմուել է Գանձակի նահանգի բոլոր գաւառներէ գիւղացիներէ և մասնաւորապէս պահեստիներէ ընտանիքներէ ցուցակները: Նոյն այդ ցուցակներով Զանգեզուրի շրջանում բաժանուել է սերմացու Գորիսի կոմիտէի միջոցով, նախագահութեամբ Մ. Մ. Տէր-Գրիգորեանի, Ղազարի շրջանում Մ. քահ. Էգիլեանի և գիւղատնտես Խ. Երիցեանի միջոցով, Գանձակի նահանգի մնացած շրջաններում—գիւղատնտես Բ. Մ. Մելիք-Շահնազարեանի ձեռքով:

Նպաստամատոյց Կոմիտէն շարունակուեալ է նոյն նպատակին ծառայել և ներկայումս:

Կանանց Կոմիտէն, ինչպէս ցոյց է տալիս զբաժանական հաշիւը, նոյնպէս իւր համեստ գործունէութիւնն է ունեցել—պատերազմի դաշտը ուղարկած տաք շորերի և այլ ընծաների քանակը տասնեակ հազարներէ է հասնում. Բացի այդ պահեստիներէ երախաների համար յատուկ ընծաներով տօնածառ է կազմակերպել ծննդեան: օներին Աստուծոյ չին մնացել և փախստականները. Կանանց Կոմիտէն այդ նպատակին էլ է ծառայել, տաք, շոր հագուստեղէն և այլ շորեղէն հասցնելով, ցուրտ ու սառնամանիքներին մատնուած սովատանջ գաղթականներին: Գրեթէ անհաշիւ բացորոշ ապացոյց է Կանանց Կոմիտէի այդ բեղմնաւոր գործունէութեան:

Միութեան Գլխաւոր Խորհուրդը, գնահատելով Կանանց Կոմիտէի արգասաւոր գործունէութիւնը, ըստ ամենայնի աջակցել է նրանց և հաւանօրէն պատերազմից յետոյ ևս այդ օգտակար ձեռնարկութիւնը կը շարունակէ իւր գոյութիւնը:

Միութեան Մելիտրատիւ (Հողային) սեկցիան շարունակել է իւր գործունէութիւնը Երևանեան նահանգում, որտեղ իւր լիազօր գիւղատնտես Ա. Ճարակեանի միջոցով բաց է արել մի շարք Վարկային ընկերութիւններ և սպառողական խանութներ: Այդ ուղղութեամբ բացի ընդհանուր ընդթ կըրող գործունէութիւնից, սեկցիան Երևանի, Էջմիածնի և Սուրբաշուի գիւղերում ընտրել է տասը գիւղ և այդ գիւղերը աշխատել է օրինակելի դարձնել, այսպէս օրինակ՝ Սարգարապատ և Ղուրդուղուլի գիւղերում հիմք է դրուած բամբակի շարքային ցուցադաշտերի. սեկցիայի գիւղատնտեսը շոշափելի օրինակով նոյն այդ ցուցադաշտերի միջոցով սովորեցրել և ցոյց է տուել գիւղացիներին շարքացանի առաւելութիւնը: Գաւառ, Զիգգամու, Էվիլար, Ալի-Ղըզըլ, Ներքին Ախտա, Սարգարապատ և Ղուրդուղուլի գիւղերում բացուած է վարկային և սպառողական ընկերութիւններ: Նոյն այդ գիւղերի բամբակի ցանքսի չոռ հիւանդութեան դէմ, սեկցիան մաքառել է յատուկ հրահանգիչ խմբերի միջոցով, հաւաքական սրսկումներ կատարելով,

ծծմբաջրով և զաղով (КВАСЦЫ): Նոյն այդ գիւղերում հիմք է դրուած հասարակական բաղնիքների ու սառցարանների:

1914 թ. սկզբներից սեկցիայի գործունէութիւնը կենտրոնացել է Բագուի նահանգի երկու հայաշատ կենտրոններում—Շամախու և Գեօզչայի գաւառներում: Այդ շրջաններում 1914 թ. սկսած ամեն տարի 400—500 տուփ շերամի սերմ է բաժանուած գիւղացիներին: Գիւրջեան և Ղալապետ գիւղերում մէկ մէկ սերմամաքրիչ մեքենաներ են դրուած: Սաղիան գիւղում երրորդ տարին է արդէն, որ սեկցիայի ինստրուկտոր-այգեգործը, վանքապատական հողերը մշակելով, գիւղացիներին սովորեցնում է այգեգործութեան կատարելագործուած եղանակը: Գալբանդ գիւղում հիմք է դրուած շերամապահական կայարանի: Սաղիան գիւղում բացուած է ջուլհականոց—գորգագործարան:

Միութեան բժշկական սեկցիայի ակտիւ գործունէութիւնը սկսուել է 1914 թ. հոկտեմբեր ամսից: Նոյն այդ ամսին կազմակերպուել է առաջին թոուցիկ փելդշերական-սանիտարական խումբը, ղեկավարութեամբ ուսանող Յ. Սափարեանի, որը գործել է ռազմաճակատում առաջին հայկական կամաւորական խմբում մինչև 1915 թ. օգոստոս ամիսը: Խմբի արգասաւոր գործունէութեան առհաստից կարող է լինել Անդրանիկի շնորհակալական գրութիւնը ուղղուած սեկցիային: Բացի կամաւորներին բժշկական օգնութիւն հասցնելը, բժշկական սեկցիան Բագուի ազգային բիւրօյի նպաստով կազմակերպել է երկու թոուցիկ բժշկական խմբեր, առաջինը բժիշկ Արամ Աւետիսեանի, երկրորդը՝ բժ. Պետրոս Թաշճեանի ղեկավարութեամբ, որոնք գործել են Պարսկաստանի, Ուրմիայի, Վանի և վերջերը Էջմիածնի շրջանում կենտրոնացած փախստականների մէջ: Բժշկական խմբերի գործունէութիւնը դադարել է 1916 թ. սկզբներին, երբ այդ գործը անցել է քաղաքային և զեմսովային միութիւններին:

Նոյն տարուայ յունիս ամսին բժշկական սեկցիայի մէջ է մտել Բագուի հայ բժիշկների ընկերակցութիւնը, որից յետոյ կազմուել է գործունէութեան նոր նախագիծ:

Միութեան հրատարակչական սեկցիան, որի նպատակն է ընդարձակել և կանոնաւորել ինքնուրոյն և թարգմանական հրատարակչական գործը մեղանում, աշխատել է ըստ չափու կարողութեան իրականացնել այդ:

Յընթաց 7—8 տարուայ սեկցիան լոյս է ընծայել մի շարք գրքեր ընթերցանութեան այլ և այլ ճիւղերին վերաբերեալ. աշխատել է գլխաւորապէս գիւղատնտեսական, պատանեկան և ժողովրդական ընթերցանութեան վերաբերեալ գրքերի հրատարակութեան, որի պակասը աւելի քան զգալի է մեղանում. աշխատել է ամեն կերպ մատչելի գնեք նշանակել հրատարակութիւններին, որպէսզի ընթերցանութեան տարածման գործին նպաստած լինի, որպէսզի հայ գիրն ու տպագրական խօսքը աւելի լայն խաւերի սեփականութիւն դառնայ:

Այդ ժամանակամիջում սեկցիան լոյս է ընծայել մի շարք գրքեր պատմական, գիւղատնտեսական, մանկական և այլ բովանդակութեամբ:

Այդ հրատարակութիւններից սեկցիան աւելի քան 7 հազար օրինակ

ձրիապէս իբրև նուէր ուղարկել է զանազան հասարակական հաստատութիւնների, գրադարանների և դպրոցների թէ Ռուսաստանում և թէ Տաճկաստանում:

Միութեան Գեղարուեստական սեկցիան, տարիներ առաջ մի շարք դժուարութիւններ յաղթահարելով, կարողացաւ թոյլաութիւն ստանալ հայ նորագոյն գրականութեան նախահայր Խաչատուր Աբովեանի արձանի կառուցման համար: Արձանի կառուցման թոյլաութիւնը ստանալուց անմիջապէս յետոյ սեկցիան ձեռնարկեց նիւթական միջոցներ գտնելու գործին— ժողովարարութիւն կատարեց լրագրութեան, մասնաւոր անձանց միջոցով, երեկոյթներ, ներկայացումներ կազմակերպեց Բագուում և թէ Բագուից դուրս: Միաժամանակ զիմուսներ արեց Ռուսաստանի և արտասահմանի բոլոր հայ անդրիագործներին, որ ուղարկեն սեկցիային կից կազմուած ժուրիին ի հաւանութիւն իրենց պրօէկտները, նկարներով կամ ֆիգուրաներով: Հայ անդրիագործներին կողմից ներկայացրուած մի քանի պրօէկտներից ժուրիի կողմից հաւանութիւն գտաւ Փարիզում աշխատող անդրիագործ Ս. Տէր-Մարութեանի ներկայացրած պրօէկտը, որը Ռուսաստանում տիրող օրէնքների համաձայն պէտք է հաստատուէր և ընդունուէր Պետրոգրադի գեղարուեստական ձեմարանի կողմից: Գեղարուեստական ձեմարանի կողմից պրօէկտը հաստատուելուց յետոյ, սեկցիան Երևանի քաղաքային վարչութեան հետ բանակցութիւններ վարեց և ստացաւ նահանգապետի կողմից հաստատուած արձանի կառուցման տեղի թոյլաութիւնը (անկիւն Աստաֆեան հրապարակի և քաղաքային այգու արևելեան մաս) և պայմանաւորուեց անդրիագործ Տէր-Մարութեանի հետ, որով Տէր-Մարութեանը պարտաւորուած է մէկ-երկու տարուայ ընթացքում Երևանում կառուցուած և միանդամայն պատրաստի արձանը յանձնել Գեղարուեստական սեկցիային, որի համար սեկցիան պիտի վճարէր նրան 17,000 ռուբլի:

Արձանը, որ պէտք է մարդու ամբողջ հասակով ու մեծութեամբ լինի, կազմուած է լինելու հետեւեալ մասերից. 1) հիմք, 2) մարմարեայ կամ գրանիտեայ պատուանդան, 3) Աբովեանի բրօնզից ձուլուած ֆիգուրան և 4) դարձեալ բրօնզից ձուլուած երկու տղայ ու աղջիկ երեխաների ֆիգուրաներ, որոնցից առաջինը՝ կռթնած պատուանդանին կարգում է անմահ «Վէրք Հայաստանին», իսկ երկրորդը՝ հեղինակի ոտքերի տակ է դնում բրօնզից ձուլուած ծաղիկների փունջը:

Ներկայումս պատրաստ է միայն արձանի հիմքը, Աբովեանի բրօնզից ձուլուած ամբողջ ֆիգուրան և երկու երեխաների գիպսիա մօզիլները, որոնք հիմք են ծառայելու բրօնզէ ձուլուածքին: Աբովեանի ֆիգուրան, ինչպէս և դեռ չաւարտուած երեխաների ֆիգուրաները ներկայումս զբանուում են Փարիզում, Տէր-Մարութեանի մօտ. պատրաստի մասը ցուցադրուած է եղել Փարիզի Solon-ում 1914 թ.:

Դեռ նախ քան այս համաշխարհային պատերազմը, գեղ. սեկցիայի բիւրօն բանակցութիւններ էր վարում ստանալու արձանի պատրաստի մասը (մինչև միւս մասերն էլ կը պատրաստուէին), սակայն վերահաս պատերազմը արգելք հանդիսացաւ ստանալուն:

Ինչպէս հաշիւներեց կը պարզուի (երես 45), մինչև օրս յօգուտ արձանի ստացուած է ընդամենը 10514 ռ. 60 կ. միւսիայն, այն ինչ արձանը կառուցանելու, պատրաստելու համար պահանջուած էր 17000 ռ., կը նշանակէ, դեռ ևս անհրաժեշտ է ունենալ մօտ 7000 ռ., որը Գեղարուեստական սեկցիան յոյս ունի պատերազմից յետոյ լրացնել և արձանը կառուցանել:

1907 թ. Գեղարուեստական սեկցիայի հրաւիրանօք Անիի պեղումների մասին պրօֆեսսոր Մարրի Բագուում կարդացած մի շարք դասախօսութիւնները (զուտ արդիւնքը մօտ 2000 ռուբլի ժամանակին յատկացրուած է պրօֆ. Մարրին—Անիի պեղումները շարունակելու համար) և յարգելի պրօֆեսսորի պատուին կազմակերպած բանկէտը առիթ ներկայացան մի փոքրիկ գումար ժողովելու (1222 ռ.) Անիում կառուցանելու մի հիւրանոց-պաստարան, թէ այնտեղ աշխատողների և թէ հնութիւնները դիտելու գնացող բազմաթիւ այցելուների համար որպէս մի օթեան: Յետագայում հանգուցեալ Մանթաշեանի ժառանգները նոյն նպատակին յատկացնելով 8000 ռ., սեկցիան ձեռնամուխ եղաւ նախապատրաստական աշխատանքներին Անիում—հիւրանոցի կառուցման, սակայն մի շարք աշխատանքներից ու սկզբնական ծախսերից յետոյ կառավարչական արգելքներ առաջ եկան հնութիւնների սահմաններում ու կից շէնք կառուցանելուն: Սեկցիան ստիպուած եղաւ շէնքը կառուցանելու Անիից 3—4 վերստ հեռավորութեան վրայ գտնուող Ղոշավանք գիւղում. սակայն այդտեղ էլ, երբ արգէն մի շարք դժուարութիւններ ու արգելքներ յաղթահարելուց յետոյ, Ալէքսանդրօպօլում կազմուած էջմիածնի անմիջական հսկողութեան ներքոյ գործող «Անի-Հոռոմոս վանքերի հոգաբարձութեան» հսկողութեամբ սկսուած էր շէնքի կառուցումը, վրայ հասաւ այս համաշխարհային պատերազմը և արգելք հանդիսացաւ գործի աւարտման:

Մինչև Միութեան թատրոնական սեկցիայի վերակազմուելը (1914 թ.), թատրոնական գործը վարում էր Գեղարուեստական սեկցիան: 1908/909 թ. Գեղ. սեկցիան, որոշ գումար յատկացնելով «Աբէլեան - Արմէնեաններ» դերասանական խմբին, պարտաւորեցրեց նրանց շրջագայելու թէ կովկասի ու Ռուսաստանի և թէ Տաճկաստանի (սահմանադրութիւնից յետոյ) մի շարք քաղաքներ ներկայացումներ տալու համար: Յայտնի է, որ այդ խումբը մեծ ընդունելութիւններ գտաւ թէ մեղ մօտ Ռուսաստանում և թէ մասնաւոր Տաճկաստանում, ուր մեծ խանդավառութեամբ էին ընդունում 30 տարուց ի վեր հալածուած հայ բեմը վերակենդանացնողներին:

Յետագայում, 1912/13 թ., Գեղ. սեկցիան Բագուում կազմակերպեց կանոնաւոր գերասանական խումբ, տ. Սիրանոյշի ղեկավարութեամբ: Այդ սեզօնին էր, որ Բագուում առաջին անգամ բեմ հանուեց Շանթի հանրաժանօթ «Հին Աստուածներ»-ը, իսկ յաջորդ տարում էլ դարձեալ Գեղ. սեկցիայի ջանքերով Բագուում գործող Պօլոնսկու դերասանական խումբը միմեանց վրայ 2—3 անգամ կրկնեց «Հին Աստուածներ»-ը ողեսերէն լիզով:

Գեղարուեստական սեկցիայի ջանքերով ու թափած հոանդի շնորհիւ

էր, որ մեզ մօտ, կողակաւում, առաջին անգամ բեմ հանուեց թիւրքահայ երաժշտագէտ Չուխաշեանի յայտնի «Լէրլէրլի» օպերան, որը մեծ յաջողութիւն ունեցաւ: «Լէրլէրլին» մի շարք անգամներ կրկնուեց Բագուի և Թիֆլիսի բեմերի վրայ:

Գեղարուեստական սեկցիան, նպատակ ունենալով հայ երաժշտագէտի ստեղծագործութեան հետ ծանօթացնելու նաև օտար, հասարակութեան, թարգմանեց օպերան և Բագուում բեմ հանեց ուսերէն լեզուով:

Սեկցիան նպատակ դնելով ունենալ մշտական կանոնաւոր երգեցիկ քառաձայն խումբ, 1915 թ. կազմակերպեց այդ խմբապետ Վ. Զիլխաշոյեանի ղեկավարութեամբ: Սուրբը, որ բազմացած է մօտ 50 հոգուց, երգում է Ս. Թադէոս և Բարդուղիմէոս եկեղեցում: Սեկցիայի նպատակն է խումբը աւելի կանոնաւորել և ծառայեցնել նրան հայկական օպերաների, համերգների, ժողովրդական ու եկեղեցական երաժշտութեան կազմակերպման ու զարգացման:

Միութեան կրթական սեկցիան թէ որքան է կարողացել օգտակար լինել իւր գաղափարներին, իւր գործունէութեան ընդգծած սահմաններում, այդ ցոյց կտայ սեկցիայի գրամական հաշիւներին կցած աղիւսակը (երես 66—67—68—75), ուր մանրամասնօրէն բերուած են սեկցիայի սկզբնաւորութեան օրուանից գիւղական դպրոցներին յատկացրուած նպաստները, ստացուած եկամուտները, դպրոցների քանակը և այլն:

Սեկցիայի Բագուի կանանց արհեստագիտական դպրոցը, շնորհիւ դպրոցի ղեկավար կանանց հոանդուն ջանքերի, շարունակում է իւր գործունէութիւնը: Իւր հիմնարկութեան օրուանից դպրոցը իւր արհեստագիտական այլ և այլ բաժիններով մօտ 100 շրջանաւարտներ է տուել, ըստ մեծի մասամբ քաղաքի չքաւոր դասից: Դպրոցում իւրաքանչիւր տարի սովորում են աւելի քան 100 աշակերտուհիներ, որոնցից չքաւորները միանգամայն ձրիավարներ են:

1914 թ. վերակազմուած Միութեան թատրոնական սեկցիան, նպատակ դնելով կազմակերպել Բագուում մշտական գրամատիկական խումբ, հիմնում է 1914/15 թատրոնական սեզօնի համար ֆօնդ և ժողովում 8000 ռուբ. Հէնց այդ կազմակերպչական աշխատանքների ժամանակ բռնուում է այս համաշխարհային պատերազմը և բիւրօն սկսում է իր գործունէութիւնը շատ ծանր պայմաններում: Չը նայած դրան, սեկցիան սեզօնի ընթացքում տալիս է 44 ներկայացում, որից հինգը արօնեմենտներով:

Չը նայելով սեկցիայի բիւրօյի թափած ջանքերին, սեզօնը առանց դեֆիցիտի վերջացնել չի յաջողում սեզօնը փակում է դեֆիցիտով, ուստի և բիւրօն որոշում է յաջորդ սեզօնին խումբը չունենալ, այլ աշխատել միջոցներ գտնել դեֆիցիտը ծածկելու և թէ մի որոշ գումար ձեռք բերելու հետևեալ տարին խումբը ունենալու համար: Այդ նպատակով բիւրօն 1916 թ. նախ՝ Մայիլեանների թատրոնում տ. Սիրանոյշի մասնակցութեամբ երկու ներկայացում է տալիս և երկրորդ՝ երկու անգամ կազմակերպում է գրական-գեղարուեստական «Մի բաժակ թէյ», որից գոյացած արդիւնքով թէ դեֆիցիտն է ծածկում և թէ ծրագրում 1917—18 թ. սեզօնի ներկայացումները:

# Հ Ա Շ Ի Ի

## ԲԱԳՈՒԱՅ ՀԱՅՈՑ ԿՈՒՆՏՈՒՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

1915 թ.

№ 9

13822

Բ Ա Յ Ո Ւ

Էլեքտրաշարժ սպ. Ս. Թ. Շահբաղեանի  
Электростанция С. Т. Шахбагова, Баку. Тел. 19-85.

1917

Բ. Հ. Կ. Մ. Գլխավոր խորհրդի 1915 թ. հաշիւը

Ա Կ Տ Ի Ի

Պ Ա Ս Ս Ի Ի

Իրավարկը			
Մնացորդ առ 1 յունուարի 1915 թ. . . . .	267	89	
Ստացուած է » . . . . .	40549	88	40817 77
Ծախսուած է . . . . .			40802 52
Մնացորդ առ 1 յունուարի 1915 թ. . . . .			15 25
Հասարակ ընթացիկ հաշիւ			
1) Թիֆլիսի Առևտրական բանկի տ. բ.			
Մնացորդ առ 1 յուն. 1915 թ. . . . .	3122	10	
Ստացուած է » » . . . . .	400		
» ստանալի 0/00/0 » . . . . .	34	08	3556 18
Ստացուած է » » . . . . .			3385 97
Մնացորդ առ 1 յունուարի 1916 թ. . . . .			170 21
2) Մեծգունարոզնի բանկում տ. բ.			
Մնացորդ առ 1 յուն. 1915 թ. . . . .	444	46	
Ստացուած է » » . . . . .	4379	35	
» ստանալի 0/00/0 » . . . . .	58	80	4438 15 4882 61
Ստացուած է . . . . .			4723 81
Մնացորդ առ 1 յունուարի 1916 թ. . . . .			158 80
Շարժական կալի			
Մնացորդ առ 1 յունուարի 1915 թ. . . . .	2331	31	
Գնուած է » » . . . . .	3	—	2334 31
Զեղչ 10 0/0 1914 թ. (հանգ. դրամ.)	68	10	
» » » 1915 թ. . . . .	233	43	301 53
Մնացորդ առ 1 յունուարի 1916 թ. . . . .			2032 78
Փոխադրութիւն . . . . .	—	—	2377 04

Հիմնական ճօնը			
Համաձայն Միութեան կանոնադրու-			
թեան 28-րդ յօդ. մնում էր առ 1			
յունուարի 1915 թ. . . . .			1424 79
Ստացուած է հաշուետարուայ ընթաց-			
քում			
1) Միանուազ վճարների 25 0/0			
Հրատարակչական սեկցիայից	—	38	
Մելիորատիւ »	3	94	
Գեղարուեստական »	1	50	
Կրթական »	2	85	
Թատրոնական »	1	88	
Բժշկական »	—	—	10 55
2) Նուէրների Բ. 1625.—5 0/0	81	25	91 80
Մնացորդ առ 1 յունուարի 1916թ . . . . .			1516 59
Ծանօթութիւն. Հաշուետարուայ ընթաց-			
քում Միութեան հիմնական ֆօնդի			
ընդհանուր գումարն է՝			
Գլխավոր խորհրդինը . . . . .	1516	59	
Մելիորատիւ սեկցիայինը . . . . .	670	13	
Կրթական » . . . . .	217	84	
Բժշկական » . . . . .	187	01	
Գեղարուեստական » . . . . .	253	24	
Հրատարակչական » . . . . .	623	43	
Թատրոնական » . . . . .	59	14	3527 38
Տրուած մուրհակներ			
Մնում էր առ 1 յունուարի 1915 թ. . . . .	3000	—	
Տրուած է հաշուետարուայ ընթացքում.	24000	—	27000
վճարուած է . . . . .			17000
Մնացորդ առ 1 յունուարի 1916 թ. . . . .			10000
Փոխադրութիւն . . . . .	—	—	11516 59

Բ. Հ. Կ. Մ. Գլխաւոր խորհրդի 1915 թ. հաշիւը

Ա Կ Տ Ի Ի

Պ Ա Ս Ս Ի Ի

Փոխադրութիւն . . .				2377	04
<b>Պատրաստագրեր</b>					
Մնացորդ պահանջ առ 1 յուն. 1915 թ.	4789	70			
Վճարուած է	8044	46	12834	16	
Ստացուած է			803	80	
Մնացորդ պահանջ առ 1 յուն. 1916 թ.				12030	36
<b>Բժշկական սեկցիա</b>					
Մնացորդ պահանջ առ 1 յուն. 1915 թ.	10	46			
Տրուած է փոխարինարար	600	—	610	46	
Ստացուած է			360	—	
Մնացորդ պահանջ առ 1 յուն. 1916 թ.				250	46
<b>Գեղարուեստական սեկցիա</b>					
Մնացորդ պահանջ առ 1 յուն. 1915 թ.	1019	67			
Տրուած է փոխարինարար	601	50	1621	17	
Ստացուած է			9	90	
Մնացորդ պահանջ առ 1 յուն. 1916 թ.				1611	27
<b>Հրատարակչական սեկցիա</b>					
Մնացորդ պահանջ առ 1 յուն. 1915 թ.	1010	77			
Տրուած է փոխարինարար	1040	38	2051	15	
Ստացուած է			50	—	
Մնացորդ պահանջ առ 1 յուն. 1916 թ.				2001	15
<b>Թատրոնական սեկցիա</b>					
Մնացորդ պահանջ առ 1 յուն. 1915 թ.	611	41			
Տրուած է փոխարինարար	907	98	1519	39	
Ստացուած է			306	10	
Մնացորդ պահանջ առ 1 յուն. 1916 թ.				1213	29
Փոխադրութիւն . . .				19483	57

Փոխադրութիւն . . .				11516	59
<b>Անդամակցական վճարներ</b>					
Ստացուած է հաշուետարուայ ընթացք.					
Անդամակցական վճարներ	1917	20			
Միանուագ	42	15	1959	35	
Տրուած է հաշուետարուայ ընթացքում.					
<b>Անդամակցական վճարներից</b>					
Մեխիորատիւ սեկցիային	646	05			
Հրատարակչական	316	75			
Գեղարուեստական	416	50			
Կրթական	176	80			
Թատրոնական	198	60			
Բժշկական	162	50	1917	20	
<b>Միանուագ վճարներից</b>					
Մեխիորատիւ սեկցիային	15	75			
Հրատարակչական	1	50			
Գեղարուեստական	6	—			
Կրթական	11	40			
Թատրոնական	7	50			
Բժշկական	—	—	42	15	
Մնացորդ առ 1 յունուարի					
<b>Միութեան տուփեր</b>					
Ստացուած է հաշուետարուայ ընթացք.				1043	97
Տրուած է					
Նպաստամատոյց կօմիտէին 1 տուփ.	913	64			
Մեխիորատիւ սեկցիային 1 »	81	12			
Բժշկական 2 »	23	07			
Գեղարուեստական 5 »	26	14	1043	97	
Մնացորդ առ 1 յունուարի 1916 թ. .					
Փոխադրութիւն . . .				11516	59





Բ. Հ. Կ. Մ. Գլխաւոր խորհրդի եկամուտի եւ ծախքի 1915 թ. հաշիւը

Մուտք			
Հաշուետարուայ ընթացքում.			
Նուիրատուութիւններ . . . . .		1625	—
Չնախատեսնուած մուտք . . . . .		3000	—
0/00/0 ընթացիկ հաշուով.			
Թիֆլիսի Առևտրական բանկի տ. բ. . .	34	08	
Մեծղունարօղնիյ » » . . . . .	58	80	92 88
<b>Յօգուտ միութեան ընդհանուր ծախքերի</b>			
Մեկիրատու սեկցիայից . . . . .	600	—	
Բժշկական » . . . . .	600	—	
Հրատարակչական » . . . . .	600	—	
Գեղարուեստական » . . . . .	600	—	
Թատրոնական » . . . . .	600	—	
Կրթական » . . . . .	600	—	
Նպաստամատոյց կօմիտէտից . . . . .		4200	—
Թատրոնական դահլիճի վարձը . . . . .		155	9072 88
<hr/>			
Հաշուեկշիռ . . . . .	—	—	9072 88

Ծախք			
Հաշուետարուայ ընթացքում.			
Ռոճիկ ծառայողներին, դիւանական և այլ ծախքեր . . . . .		2739	08
Ապահովադրութեան . . . . .		279	13
Չեղջ շարժական կայքի . . . . .		233	43
<b>Նպաստներ</b>			
Շինարարական յանձնաժողովին . . . . .	3000	—	
Թատրոնական սեկցիային, համաձայն 26 մայիսի 1915 թ. ընդհանուր ժողովի որոշման, „Եսկու“ լրագրի պարտքը վճարելու համար . . . . .	306	10	3306 10
Համաձայն կանոնադրութեան 28-րդ յօդ. եկամուտների 50/0 յատկացրած է հիմնական ֆոնդին . . . . .		81	25 6638 99
Յաւելեալ մուտք . . . . .			2433 89
<hr/>			
Հաշուեկշիռ . . . . .	—	—	9072 88

Հաշուեկշիռ Բ. Հ. Կ. Մ. Գլխաւոր խորհրդի առ 1 յունուարի 1916 թ.

Ա Կ Տ Ի Ի

Պ Ա Ս Ս Ի Ի

<b>Դրամակո</b>			
Կանխիկ դրամ . . . . .		15	25
<b>Ընթացիկ հաշիւ</b>			
Թիֆլիսի Առևտրական բանկում . . . . .	170	21	
Մեծ դռնարօղնիյ » . . . . .	158	80	329 01
<b>Շարժական կայք</b>			
Միութեան շարժական կայքը . . . . .		2032	78
<b>Պարտապաններ</b>			
Թատրոնական սեկցիա . . . . .	1213	29	
Հրատարակչական » . . . . .	2001	15	
Գեղարուեստական » . . . . .	1611	27	
Բժշկական » . . . . .	250	46	
Կրթական » . . . . .	202	32	
Մեկտրատիւ » . . . . .	106	19	5384 68
Շինարարական յանձնաժողով . . . . .	9044	46	
Սատիսեան Կ. Ի. . . . .	2500	—	
Աղալեան Ֆ. . . . .	485	90	12030 36
<hr/>			
Հաշուեկշիռ . . . . .	—	—	19792 08

<b>Հիմնական ժօնդ</b>			
Համաձայն կանոնադր. 28-րդ յօդ. . . . .			1516 59
<b>Տրուած մուրհակներ</b>			
Դ. Խ. Աւան-Իւզրաշեանին . . . . .			10000 —
<b>Պարտատէրեր</b>			
«Բագու» . . . . .	2197	70	
«Զանգ» . . . . .	55	38	
Առաքելեան Ա. . . . .	200	—	2453 08
Մնացորդ եկամուտներից—չբաժանուած սեկցիաների մեջ . . . . .			5822 41
<hr/>			
Հաշուեկշիռ . . . . .	—	—	19792 08

Բ. Հ. Կ. Մ. Շինարարական յանձնաժողովի 1915 թ. ելուտից հաշիւը

Մ Ո Ւ Տ Ք

Ե Լ Ք

Մնացորդ առ 1 յունուարի 1915 թ. . .			133	44
Ստացուած է նուիրատուութիւններ				
Շինութեան համար		1000		
»    Եղբ. Միրզոյեաներից . . .				
Շինութիւնը հիւանդանոցի յարմարացնելու համար				
Եղբ. Ծատուրեաններից.	1000			
Ա/տ. Արուսթեաններից.	500	1500	2500	
Միութեան Գլխաւոր Խորհրդից . . .			3000	
» <sup>0/0</sup> / <sub>0</sub> թիֆլիսի Առևտրական բանկից ընթացիկ հաշուով			5	17
»    Փոխարինարար Գլխաւոր Խորհրդից . . .			8044	46
<hr/>				
Հաշուեկշիռ . . .			13683	07

Տրուած է Շինութեան վերաբերիալ ծախսերի համար				
Պարսֆերից.				*)10469 61
»    Գ. Լազարեանին . . .			300	
Եղբ. Թումանեաններին . . .			100	
Նպաստամատոյց կօմիտէին			600	
Հ. Համբարձումեանին և				
Գ. Յովհաննիսեանին			1300	2300
Մնացորդ առ 1 յունուարի 1916 թ. . .				913 46
<hr/>				
Հաշուեկշիռ . . .				13683 07

\*)

Քարի գործ . . . . .	2771	04
Ներկի և սոււալի . . . . .	2350	—
Փայտեղէնի . . . . .	892	79
Տոմեաի . . . . .	600	—
Ասֆալտի . . . . .	865	62
Երկաթէ բետօնի և ցեմէնտի . . . . .	1057	56
Կանալիզացիայի . . . . .	305	40
Վառարանների . . . . .	377	50
Ապակիների . . . . .	300	—
Տանիքը ծածկելու (չերեպիցա) . . . . .	250	—
Պարկետների . . . . .	109	—
Զանազան նիւթեղէնի . . . . .	293	50
Օրավարձ . . . . .	297	20
		10469 61

Հաշուեկշիռ Բ. Հ. Կ. Մ. Շինարարական յանձնաժողովի առ 1-ն յունուարի 1916 թ.

Ա Կ Տ Ի Ի

Պ Ա Ս Ս Ի Ի

Դրամարկ			
Կանխիկ դրամ			913 46
Անգարժ կայք			
Ծախսուած է շինութեան համար 1912 թ.	9942	34	
» » » 1913 »	55784	61	
» » » 1914 »	32201	71	
» » » 1915 »	10469	61	108398 27
Հաշուեկշիռ . . .			109311 73

Սացուած է նուիրատուքիւններ շինութեան համար.			
1912 թ.	14665	—	
1913 »	49892	18	
1914 »	5907	75	
1915 »	1005	17	71470 10
Նուիրատուքիւններ շինութիւնը հիւանդանոցին յարմարեցնելու համար.			
1914 թ.	*)23302	95	
1915 »	1500	—	24802 95
Գլխաւոր խորհրդից			3000 —
Պարսաստերեր			
Գլխաւոր խորհուրդ	9044	46	
Նպաստամատոյց յանձնաժողով	300	—	
Եզր. Թումանեաններ	494	22	9838 68
Գրաւականներ			
Հ. Համբարձումեան և Գ. Յովհաննիսեան			200 —
Հաշուեկշիռ . . .			109311 73

\*) Նուիրատուների ցուցակը տես 1913 և 1914 թ. տպագրուած հաշուում:





Հաշուեկշիռ Բ. Հ. Կ. Մ. Գլխաւոր  
Ա Կ Տ Ի Ի

Դրամարկղ				
Կանխիկ դրամ			893	25
Ընթացիկ հաշիւ			7275	81
Թիֆլիսի Առևտրական բանկում				
Առ հաշիւ տրուած գումարներ				
Շինարարական յանձնաժողով	300	—		
Տէր-Ստեփանեան Գ. Բ.	600	—		
Մելիք-Շահնազարեան Բ. Մ.	776	10		
Երիցեան Խ.	3000	—		
Եղբայրական օգնութ. Շուշուայ ճիւղ	5000	—	13676	10
Տէր-Գրիգորեան Մ. Գորիս	4000	—		
Ինվենսար				
Երկրագործական մեքենաներ եւ գործիքներ				
Հոռոմ գիւղում, Ալէքսանդր. գաւառ	785	—		
Բաշ-Աբարան, Էջմիածնի »	779	—		
Ռանգամալ, Նոր-Բայազէթի »	1020	—		
Նոր-Բայազէթում	510	79	3094	79
Ծախսուած գումարներ				
1) Պահեստի գումարներից՝				
ձախսուած է 1914 թ.	416	79		
» 1915 »	7389	56	7806	35
2) Վերաւորուածների գումարներից				
բժշ. սեկցիային տրուած է				
1914 թ.	1200	—		
» 1915 »	3730	—	4930	—
3) Փախսականների գումարներից				
Բագ. հայկ. կոմիտէին տրուած է				
» 1914 թ.	—	—		
» 1915 »	4000	—	4000	—
Հաշուեկշիւ . . .			41676	30

Կոմիտէի առ 1-ն յունուարի 1916 թ.  
Պ Ա Ս Ս Ի Ի

Սացուած նուիրասուութիւններ				
Սացուած է պահեստիների գիւղական ընտանիքների օգտին				
1914 թ.	22004	68		
1915 »	8069	46	30074	14
Սացուած է վերաւորների օգտին				
1914 թ.	2978	84		
1915 թ.	2255	33	5234	17
Սացուած է փախսականների օգտին				
1914 թ.	1746	94		
1915 »	3926	26	5673	20
Պարսուսւելքեր				
Թիֆլիսի Հայոց Գիւղատնտեսական Ընկ. գիւղատնտեսական մեքենաների արժէքի մնացորդը	3094	79	2400	
Հաշուեկշիւ . . .			41676	30

**Յ Ո Ւ Ց Ա Կ**

ԳԱՆՁԱԿԻ ՆԱՀԱՆԳԻ ՊԱՀԵՍՏԻՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԲԱԺԱՆՈՒԱԾ ՍԵՐՄԱՑՈՒՆԵՐԻ

Նահանգ	№	Գ Ի Ի Ղ	Ընտանիքների քանակը	ԿՇԻՌ		ԸՐՓԷՔ		ԳՈՒՄԱՐ	
				Փուլթ. Թ.	Բուք. Կ.	Բուք. Կ.	Բուք. Կ.		
Բուն Ձանգեղուքի շրջան	1	Մաղանջուղ	5	29	—	21	90		
	2	Գեօրու	3	5	—	3	90		
	3	Ալիզուլի-շէն	2	10	—	9	50		
	4	Խնձորեակ	61	283	—	279	60		
	5	Կոռնիձօր	11	80	—	57	60		
	6	Հարար	7	50	—	46	—		
	7	Արաւուս	1	6	—	5	20		
	8	Ղալաղարասիա	36	142	—	148	—		
	9	Տեղ	17	111	—	107	30		
	10	Խնածախ	25	113	20	129	70		
	11	Խողնաւար	20	100	—	106	90		
	12	Մինքենդ	10	41	35	51	80		
	13	Ալիզուլի I	4	25	20	28	20		
